հրովարտակ-վաւերագրի։ Մեր մատենագրութեան մէջ «Զօրանամակ» անուանումն արձանագրուած չէ, ուստի այն մնում է պայմանական։ Չնայած դրան, դժուար թէ հնարաւոր է փաստարկել Ն. Ադոնցից եկող եւ թեթեւօրէն շրջանառուող այն դրոյթը, իբրեւ թէ տուեալ փաստաթուղթը «Գահնամակ»-ի մի տեսակ է։

«Զօրանամակ»-ի բնագիրը ամբողջական պահպանուած լինելու տպաւորութիւն է թողնում, իսկ «Գահնամակ»-ն, ընդհակառակն, ըստ ամենայնի՝ բազմաթիւ անունների պակաս ունի վերջից (Ն. Ադոնցի հաշուարկով՝ երկու տասնեակից աւելի)։ Պարզ է, որ դրա պատճառը տեխնիկական է. այդ գրեթէ առանց բացառութեան փոքր նախարարութիւնների անուններն, անկասկած, եղել են մեզ հասած միակ թերթը պարունակած ձեռագրի յաջորդ թերթի սկզբում։ Ընդ սմին, կորսուած անունների մեծ մասը որոշակի հաւանականութեամբ կարող է վերականգնուել «Զօրանամակ»-ի օգնութեամբ։ Պակասում են նաեւ «Գահնամակ»-ի բնագրի առաջին տառերը (կամ տառը), որի պատճառը գրիչների՝ հաճախակի հանդիպող անփութութիւնն է, երբ նրանք բաց էին թողնում բնագրի կամ հատուածի սկիզբնատառերը կամ սկիզբնատողերը՝ արտագրութիւնն աւարտելուց յետոյ դրանք գունազարդ նկարելու նպատակով, սակայն վերջում մոռանում էին անել դա (որոշ դէպքերում էլ զարդագոյնն աւելի շուտ էր քայքայւում-ջնջւում)։

«Զօրանամակ»-ի՝ մեզ հասած բնագրի ձեւաւորման ժամանակը Տրդատ Գ-ի դարաշրջանին կամ ամենաուշը՝ Խոսրով Կոտակի իշխանութեան առաջին տարիներին վերագրելու տարբերակը վաւերագրի հաւաստիութիւնն ընդունող հետազօտողների մօտ կասկած չի յարուցում։ Իրոք, փաստաթղթում արձանագրուած մի քանի նախարարական տներ Հայաստանում հաստատուել էին, ըստ հաւաստի աղբիւրագիտական տուեալների՝ Տրդատի իշխանութեան տարիներին (298-330), իսկ մի քանիսն էլ ոչնչացուել էին նրա որդու՝ Խոսրով Կոտակի օրօք (Մանաւազեաններ, Որդունիներ եւն)։ Փոխարէնը՝ «Գահնամակ»-ի թուագրման հարցում տեսակէտներն էապէս հակասական են։ Ն. Ադոնցի եւ նրա հետեւորդների կարծիքով՝ Սահակ Պարթեւի նամակը գրուել է մարզպանութեան ստեղծումից (այսինքն՝ 428-ից) յետոյ։ Բնագրի բովանդակութեան մանրամասն վերլուծութեան շնորհիւ այդ կարծիքն արդարացիօրէն հերքելով՝ Բ. Ուլուբաբեանը (Հիւսիս-արեւելեան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը, «ԲԵՀ», 1975, թիւ 2, էջ 159-161) ցոյց է տուել, որ «Գահնամակ»-ն արտացոլում է մինչմարզպանական շրջանի պատկերը, ուստի կարող է շարադրուած համարուել Ե դարի առաջին քառորդում։ Բանասիրական նոր քննութեան ենթարկելով մեզ հասած բնագիրը՝ Բ. Յ. Յարութիւնեանը («Գահնամակի» թուագրման հարցի շուրջը, - «ՊԲՀ»,